

ՊՐԱԿԱՆ ԶՐԴԵՐՆԵՒԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ա. ՈՒ. ԴՐԵՑԱՆ

Խորհրդային Միության քուրդ ազգաբնակչության գրական լեզվի կազմավորման խնդիրը քննելիս առաջին հերթին հարց է ծագում, թե ինչու գրական քրդերենը կազմավորվեց հենց Հայաստանում և ոչ թե խորհրդային մեկ այլ համրապետությունում, մասնավորապես Ադրբեջանում, որտեղ, գոյություն ունեցող տվյալների համաձայն, 1920-ական թվականներին ապրում էր 37 հազար քուրդ¹, կամ² Թուրքմենստանում, որտեղ այդ նույն ժամանակաշրջանում բնակվում էր 100 հազարից ավելի քուրդ³, այսինքն՝ զգալիորեն ավելի, քան Հայաստանում, որտեղ կար 19 548 քուրդ⁴:

Հայտնի է, որ Ադրբեջանի կառավարության որոշմամբ 1923 թ. ստեղծված Քուրդիստանյան նահանգում (Քելբաջար, Լաչին և Ջանգելան շրջանների միավորով), որը հետագայում վերափոխվեց և վերանվանվեց Քուրդիստանյան Ազգային Ավտոնոմ Օկրուգ՝ Լաչին քաղաք կենտրոնով⁵, իր գոյության առաջին տարիներին սոցիալ-տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքի զարգացման մեծ առաջընթաց էր սպասվում:

1925 թ. Քուրդիստանյան նահանգի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման նպատակով ստեղծված հանձնաժողովի կողմից ձեռնարկված միջոցառումներից էր «Սովետական Քուրդիստան» թերթի լույսընծայումը Շուշի քաղաքում, քրդական մանկավարժական տեխնիկումի հիմնումը, քրդական գյուղերում դպրոցների բացումը, դպրոցական դասագրքերի, գեղարվեստական ու քաղաքական գրականության հրատարակումը⁶ և այլն:

Սակայն 20-ական թվականների վերջերից Ադրբեջանի կառավարությունը, դրսևորելով ազգայնական մոտեցում, ինչպես նաև այդ տարիներին Թուրքիայի հետ կապված արտաքին քաղաքական իրավիճակից բխող միտումներ, հետզհետե դադարեցրեց վերը թվարկված միջոցառումները⁷: 1930 թ. վերացվեց քուրդիստանյան օկրուգը⁸, ազգային պատկանելիության պատճառով ճնշվող, հալածվող և հետապնդվող քրդերը իրենց անձնագրերում ազգային սյունակի դիմաց գրեցին ադրբեջանցի: Բանը հասավ այնտեղ, որ 1979թ. մարդահամարի տվյալներում քրդեր չճշվեցին⁹: Ավելի վատթար վիճակում հայտնվեց Խորհրդային Թուրքմենիայում բնակվող քուրդ ազգաբնակչությունը: Այստեղ փաստորեն բռնի ծուլման քաղաքականության հետևանքով քրդերը թուրքմենացան: Արդեն 60-ական թվականներին, ինչպես այդ մասին գրում է քուրդ լեզվաբան Չ. Խ. Բակաևը իր հայտնի «Թուրքմենիայի քրդերի բարբառը» աշխատությունում, քրդերը տանը ավելի շատ խոսում են թուրքմեներենով, քան մայրենի լեզվով, երեխաները հիմնականում

¹ Տե՛ս Ա. Букшпан, *Азербайджанские курды*, Баку, 1932, էջ 61:

² Տե՛ս Т. Ф. Аристова, *Курды Закавказья*, М., 1966, էջ 16:

³ Տե՛ս Карлене Чачани, *Пызмамтияа шьмә'та Өрмөнийа у Кӧрда*, Ер., 1977, էջ 139:

⁴ Տե՛ս А. Букшпан, նշվ. աշխ., էջ 49-53:

⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 82-84:

⁶ Տե՛ս "Заря Востока", № 237 (2205), 15 հոկտեմբեր 1929:

⁷ Տե՛ս Ляtif Маммад, *Исторический ареал сложения курдского этноса. Курдистан — страна курдов - «Дружба»*, № 22, 2003, էջ 61-63:

⁸ Տե՛ս «ՍՍՀՄ բնակչությունը ըստ 1979 թ. համամիութենական մարդահամարի տվյալների», Եր., 1980, էջ 31:

չեն տիրապետում մայրենիին, համգամանք, որ վկայում էր, որ քրդերենը դուրս է մղվում կենցաղից⁹:

Այլ էր Հայաստանում ապրող քուրդ ազգաբնակչության ազգային, սոցիալական ու քաղաքական կյանքի, նրա մշակույթի և լեզվի վիճակը խորհրդային տարիներին:

1920-30-ական թվականներին Հայաստանում քրդերեն գրական լեզվի սկզբնավորման հնարավորությունը պայմանավորված էր երկու կարևոր գործոնի առկայությամբ՝ խորհրդային Հայաստանի կառավարության կողմից հանրապետության ազգային փոքրամասնությունների, այդ թվում՝ քուրդ ազգաբնակչության նկատմամբ անխտրական ազգային քաղաքականության սկզբունքների կիրառմամբ և հայ ազգաբնակչության, առաջին հերթին մտավորականության բարյացակամ վերաբերմունքով, քուրդ ազգաբնակչության հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի առաջընթացին աջակցելու պատրաստականությամբ: Աղդեբանում և Թուրքմենիայում այս երկու կարևոր գործոնների բացակայության հետևանքով այնտեղ ապրող քուրդ ազգաբնակչությունը գրկվեց ազգային լեզվի ու մշակույթի զարգացման հնարավորությունից, անկախող գտնվեց նույնիսկ օգտվելու Հայաստանի քուրդ ազգաբնակչության կյանքում տեղի ունեցող հսկայական վերափոխումներից, այդ թվում՝ այստեղ կազմավորվող քրդերեն գրական լեզվից:

Խորհրդային ժամանակաշրջանում ազգային հարցի լուծման գործընթացը Հայաստանում նշանակալից իրադարձություն էր հանրապետության ողջ բնակչության, այդ թվում՝ քուրդ ազգաբնակչության սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքում: Այն դրսևորվեց նախ և առաջ հանրապետության կառավարության կողմից ձեռնարկված միջոցառումների իրականացմամբ, որոնք պայմանավորեցին և ապահովեցին քուրդ ազգաբնակչության ազգային կյանքի առաջընթացը՝ տիրող անգրագիտության վերացման, դպրոցական ցանցի կառուցման, քրդական մշակութային օջախների հիմնման և ազգային կադրերի պատրաստման ուղղությամբ: Նշենք, որ այս բոլոր միջոցառումների իրականացումը հիմք հանդիսացավ Հայաստանում քրդական գրության ստեղծման և դրանով պայմանավորված՝ քրդերեն գրական լեզվի կազմավորման համար:

Գրական քրդերենի սկզբնավորման ճանապարհին առաջին քայլը 1921թ. հայկական տառերի հիման վրա Հակոբ Ղազարյանի (Լազո) կազմած քրդական այբուբենն էր, որի «Շանս» (արև) վերնագրով առաջին քրդերեն այբբենարանը գործեց մինչև 1929 թ.¹⁰: Այդ այբբենարանը հնարավորություն ընձեռեց սկզբում Հայաստանի քրդաբնակ մի շարք գյուղերում, իսկ սկսած 1925 թ.՝ արդեն բոլոր քրդաբնակ գյուղերում բացել դպրոցներ և կազմակերպել դասավանդումը¹¹: Նույն այդ ժամանակահատվածում մեծահասակների շրջանում անգրագիտությունը վերացնելու նպատակին էին ծառայում ստեղծված առանձին դպրոցներն ու խրճիթ-ընթերցարանները¹²: 1925 թ. Լենինականում հրավիրված անդրկովկասյան քրդերի համագումարը, որի աշխատանքում մեծ տեղ էր հատկացվել քրդերի շրջանում անգրագիտության վերացման խնդրին, դիմեց Հայաստանի կառավարությանը՝ հայատառագրությունը փոխարինելու լատինատառագրությամբ¹³: 1926 թ. քուրդ հասարակական գործիչներ Արաբ Շամիրովը և Իսահակ Մարագուլովը ձեռնամուխ եղան լատինատառ քրդական այբուբենի ստեղծման գործին: 1929 թ. լույս տեսավ նրանց կազմած «Քրդերեն լեզվի ինքնուսուցման համար» խորագրով դասագիրքը, իսկ սկսած 1930թ.¹⁴ մեծ քանակությամբ գեղարվեստական, հասարակական-քաղաքական, գիտական և դպրոցական գրականություն: 1944 թ. այս այբուբենը փոխարինվեց ռուսատառով, որը շարունակում է իր գոյությունը մինչև օրս:

⁹ Տե՛ս Կ. Խ. Бакаев, *Говор курдов Туркмении*, М., 1962, էջ 7, նույնի Язык курдов СССР, М., 1973, էջ 10-11:

¹⁰ Տե՛ս Ա. Լազո, *Շանս*, Քրդաբնակ, Էջմիածին, 1921:

¹¹ Տե՛ս Խ. Մ. Чатоев, *Курды Советской Армении*, Ер., 1965, էջ 113-136:

¹² Տե՛ս նույն տեղը:

¹³ Տե՛ս նույն տեղը:

¹⁴ Տե՛ս նույն տեղը:

Ազգային կադրերի պատրաստման նպատակով 1928-1929 թթ. անդրկովկասյան հանրապետություններից, այդ թվում՝ Հայաստանից Մոսկվա և Լենինգրադ են գործուղվում մեծ թվով երիտասարդ քրդեր՝ խորհրդային արևելքի ժողովուրդների համար բացված բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու¹²։ Նույն թվականից սկսած՝ նկատվում է Հայաստանի ուսումնական հաստատություններում քուրդ երիտասարդների կրթություն ստանալու ձգտումը։ Կազմակերպվում են քրդական ուսուցչական նախապատրաստական դասընթացներ։

1931թ. Հայաստանի կ(թ)կ կենտրոնական կոմիտեի և ժողկոմսովետի որոշմամբ Երևանում կազմակերպվում է քրդական մանկավարժական տեխնիկումը, որտեղ 1931-1932 ուս. տարում սովորում էր 60, 1932-1933 ուս.տարում 105, իսկ 1933-34 ուս.տարում 110 ուսանող¹³։ Քրդական գյուղական դպրոցների համար ուսուցիչներ պատրաստելու նպատակով 1955թ. Հայկական ՍՍՌ մինիստրների Սովետի հանձնարարությամբ լուսավորության մինիստրությունը Երևանի մանկավարժական ուսումնարանի կազմում ստեղծում է քրդական բաժին, որտեղ հայ ուսուցիչների հետ միասին դասավանդում էին հայկական կրթություն ունեցող ազգությամբ քուրդ ուսուցիչներ։

Գրական քրդերենի կազմավորման և հետագա զարգացման գործում չափազանց մեծ է եղել 1930 թ. որպես ժողկոմատի օրգան հիմնված քրդերեն լեզվով աշխարհում առաջին թերթը՝ «Ռյու թագա» (նոր ուղի) վերնագրով, որի աշխատանքները ընդհատվեցին 1937 թ., և միայն 1955 թ. այն սկսեց վերահրատարակվել որպես ՀԿԿ կենտկոմի օրգան։

Իր հիմնման օրվանից սկսած՝ «Ռյու թագա» թերթը ըստ էության գրական քրդերենի ձևավորումը կազմակերպող և կանոնավորող մարմին էր, այդ լեզուն սովորելու և տիրապետելու դպրոց ու դասագիրք հանրապետության քուրդ ազգաբնակչության համար։

Քրդական խորհրդային գրականության սկզբնավորման և զարգացման նպատակով 1932թ. Հայաստանի գրողների միությանն առընթեր կազմակերպվում է քուրդ գրողների սեկցիան, որը հատկապես հետագա տարիներին լայն աշխատանք է ծավալում գեղարվեստական գրականության ստեղծման, թարգմանական գրքերի և դասագրքերի հրատարակման, ինչպես նաև քրդական ժողովրդական բանահյուսության հավաքման ու լույսընծայման ուղղությամբ։ Մասնավորապես 1929-1937 թթ. արդեն հրատարակվել էր 70 անուն գիրք՝ 142 400 տպաքանակով¹⁴։

Սեկցիայի անդամների գեղարվեստական և թարգմանական գործերի շարքում առանձնապես արժեքավոր են Արար Շամիրովի, Վազիրե Նադիրի, Ջարդոյե Գենգոյի, Հաջիե Ջնդիի, Սահիդե Իբոյի, Ուսուրե Բաքոյի, Ասկյարե Բոլիկի, Միրոյե Ասադի և այլ գրողների ստեղծագործությունները¹⁵։

Գրական քրդերենի կազմավորման գործում կարևոր դեր է խաղացել նաև 1930 թ. Հայաստանի ուղիույի կազմում ստեղծված քրդերեն հաղորդումների բաժինը, որի աշխատանքները ընդհատվեցին 1936 թ. և միայն 1955 թ. վերսկսվեցին։ Քրդական ուղիուհաղորդումները սովորաբար առաջնորդվում են «Ռյու թագա» թերթի լեզվով և միասնական կանոնավորման դրվածքով։

1932 թ. Հայաստանի պատմության ինստիտուտում կազմակերպվում է քրդագիտական սեկցիան, որի գիտական հետազոտական անձնակազմը հետագայում՝ 1959 թ., փոխադրվում է ՀՄՄՀ ԳԱ Արևելագիտության սեկտոր և դառնում առանձին բաժին, իսկ ներկայումս այն գործում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում։ Մինչև օրս բաժինը հրատարակել է գիտահետազոտական բազմաթիվ հիմնարար աշխատություններ, որոնք ներկայացնում են ժամանակակից քրդագիտության գրեթե բոլոր բնագավառները։ Մեծ է նրա դերը քրդերեն գրական լեզվի կազմավորման և զարգացման, դպրոցական դասագրքերի,

¹² Տե՛ս նույն տեղը։

¹³ Տե՛ս նույն տեղը։

¹⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 113-136։

¹⁵ Այս ստեղծագործությունների գրականագիտական բնութագրությունը տես Հաջիե Ջնդի, Հայաստանի քրդական գրականությունը, Եր., 1954։ «Ակնարկ Սովետական Հայաստանի քրդական գրականության», Եր., 1970։

մեթոդական ձեռնարկների և դասավանդման ծրագրերի ստեղծման գործում¹⁹։ Խորհրդային Հայաստանում մեկ միասնական լեզվական քաղաքականության մշակման և իրականացման ուղղությամբ ծավալված աշխատանքներից մեծապես օգտվեցին երկրի բոլոր ազգային փոքրամասնությունները, այդ թվում նաև՝ քրդերը։

Քրդերեն գրական լեզվի կազմավորման գործընթացում, վերը նշված կարևոր միջոցառումների հետ մեկտեղ, առանձնահատուկ նշանակություն ունեցավ 1934 թ. հուլիսի 9-ին Երևանում գումարված համամիութենական 1-ին քրդագիտակ կոնֆերանսը։ Ի թիվս քրդագիտական այլևայլ հարցերի՝ կոնֆերանսը հատուկ ուշադրություն դարձրեց գրական քրդերենի շինարարության հարցերին²⁰։

Պետական մակարդակով կազմակերպված այս խոշոր միջոցառումը, որի աշխատանքներին մասնակցեցին հանրապետության կառավարության ներկայացուցիչները, խոշորագույն գիտական ու կրթական հիմնարկների աշխատակիցները, ինչպես նաև տարբեր հանրապետություններից եկած բազմաթիվ հյուրեր, վկայում է երկրի քուրդ ազգաբնակչության հանդեպ Հայաստանի կառավարության, հայ մտավորականության և գիտական հասարակայնության ցուցաբերած ջերմ վերաբերմունքի և հոգատարության մասին։ Բավական է նշել, որ կոնֆերանսում բացման խոսք ասաց ՀԿԿ կենտրոնական գործադիր կոմիտեի նախագահ Ս. Մարտիկյանը, իսկ ՀԿԿ կենտկոմի կոլլոտուրայի և պրոպագանդայի բաժնի վարիչ Լ. Արիսյանը ընթերցեց ՀԿ (ք) կ կենտկոմի քարտուղար Ա. Խանջյանի ողջույնի ուղերձը²¹։

Կոնֆերանսը բնության առավ միասնական գրական քրդերենի մշակման, նրա այբուբենի և ուղղագրության, քերականական կառուցվածքի ուսումնասիրության և տերմինաբանության ու բառակազմության հարցերը, որոնց վերաբերյալ ելույթներով հանդես եկան հանրապետության հայտնի գիտնական-լեզվաբաններ Հ. Աճառյանը, Գ. Ղափանցյանը, Ա. Ղարիբյանը, Գ. Սևակը, ինչպես նաև համամիութենական ԳԱ լեզվի ինստիտուտի գիտաշխատակից, քրդագետ Վ. Վիլչևսկին, որն ընթերցեց ակադեմիկոս Ն. Մառի և ինստիտուտի կոլեկտիվի ողջույնի ուղերձը։ Գիտնականների ելույթներում, ինչպես նաև ռադիոյով և մամուլի էջերում հրատարակվող նյութերում կենտրոնական տեղ էր գրավում գրական քրդերենի շինարարության անհրաժեշտության խնդիրը, որի լուծումը քուրդ ժողովրդի համար ուներ ոչ միայն մշակութային ու գիտական, այլև քաղաքական, ինչպես նաև կենսական կարևորություն։ Ըստ այդմ մշակվեց գրական քրդերենի սկզբնավորման ու Կարգացման ծավալում ծրագիրը։ Նշվեցին դրա իրականացման ուղիները, պայմաններն ու Կարավորությունները։

Փաստաբան 1934 թ. հայաստանյան համամիութենական առաջին քրդագիտական կոնֆերանսի ազգկացումով առաջին անգամ պետական մակարդակով մշակվեց գրական քրդերենի շինարարության ուղղությամբ կատարվելիք միջոցառումների մի ամբողջ համալիր։

Կոնֆերանսը խոշոր իրադարձություն էր քուրդ ժողովրդի կյանքում։ Այն դարձավ անցած 14 տարիների լճաքցքում հանրապետության քուրդ ազգաբնակչության ձեռք բերած նվաճումների վկայությունը և նոր հաջողությունների հասնելու գրավականը, մեծապես նպաստեց քուրդ ազգաբնակչության շրջանում անգրագիտության վերացման, քրդական մշակութային օջախների հիմնման, ազգային կադրերի պատրաստման և քրդական ազգային գրականության ստեղծման գործընթացի հետագա ծավալմանը։

¹⁹ Քրդագիտական բաժնի աշխատակիցների՝ Ամինե Ավդալի, Հաջին Ջնդիի և Մաքսիմե Խամոյի (Մաքսիմ Խամոյանի) այս ուղղությամբ ծավալած գործունեության արդյունքները ներկայացնող գիտական աշխատությունների, դասագրքերի և դասավանդման ծրագրերի ընդարձակ ցանկը տես՝ «Курды Советской Армении, библиография (1920-1980)», составил Джалиле Джалил, Ер., 1987։

²⁰ Մանրամասն տես՝ Ն. Խ. Մախմուդով, Քուրդ ժողովուրդ, Եր., 1959, էջ 234-235։

²¹ Տե՛ս նույն տեղը։

Ամփոփելով վերը ասվածը՝ այսօր կարող ենք արձանագրել, որ շնորհիվ Հայաստանի խորհրդային հանրապետության կառավարության գործադրած մեծ ջանքերի, հայ մտավորականության, և հատկապես գիտական հասարակայնության անշահախնդիր օգնությամբ, հայ ազգաբնակչության բարյացակամ փրարերմունքի և քուրդ ժողովրդի անդու աշխատանքի՝ հենց քաղաքամայր Երևանն էլ դարձավ գրական քրդերենի ստեղծման ու զարգացման՝ աշխարհում առաջին կենտրոնը:

А. У. ДРБОЯН — Процесс формирования и развития курдского литературного языка в Советской Армении. — Среди курдского населения Советского Союза только курдам Советской Армении удалось пережить реальный прогресс в социально-экономической, гражданской и культурной сферах, в том числе и в деле создания литературного языка.

Это было обусловлено двумя важными факторами:

1. Непредвзятой, благоприятной для национальных меньшинств, в том числе и для курдского народа, национальной политикой правительства Советской Армении;
2. Дружественным отношением коренного армянского народонаселения к курдам.